ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«17» փետրվար 2020թ. No 630 - Ա

«ԿՐԾՔՈՎ ՍՆՈՒՑՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՄԵԿՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018թ. հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով Վորլդ Վիժն Հայաստանի ծրագրի տնօրեն Ժիրայր Էդիլյանի 17.12.2019թ. հայտը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել 2020 թվականի մարտի 4-ին ք. Իջևանում, մարտի 5-ին ք. Նոյեմբերյանում, մարտի 6-ին ք. Բերդում, մարտի 17-ին ք. Աշտարակում, մարտի 18-ին ք. Ապարանում և մարտի 19-ին գ. Ծաղկահովիտում (կրկնողաբար) Վորլդ Վիժն Հայաստանի կողմից կազմակերպվող «Կրծքով սնուցում» թեմայով մեկօրյա դասընթացի ծրագիրը համաձայն Հավելված 1-ի:

2. «Կրծքով սնուցում» թեմայով մեկօրյա դասընթացի մասնակիցների վկայականները վավերացնել ՀՀ առողջապահության նախարարության կնիքով:

3. Շնորհել՝

1) «Կրծքով սնուցում» թեմայով մեկօրյա դասընթացի մասնակիցներին ՇՄՋ 5 տեսական կրեդիտ:

2) «Կրծքով սնուցում» թեմայով դասընթացի դասընթացավար Սուսաննա Հարությունյանին՝ ՇՄՋ 5 տեսական կրեդիտ:

4. Վկայականները վավերացման ներկայացնելիս անհրաժեշտ է ներկայացնել նաև տեղեկատվություն մասնակիցների վերաբերյալ՝ համաձայն կից ձևաչափի (Հավելված 2):

5. Վկայականները անհրաժեշտ է ներկայացնել վավերացման միջոցառման անցկացումից հետո առավելագույնը մեկամսյա ժամկետում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանին:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ